ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2019 թվականի N: 493-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՔԵԹԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 30-ի թիվ 574/19 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քեթիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի նիստի թիվ 5 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քեթիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

(այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գրիգոր Պապոյանի, Վարդան Պետրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Թորգոմ Սահակյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աննա Օթարյանի, Ղևոնդ Հովհաննիսյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Վարդ Վարդանյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Նարինե Ղազարյանին, Արմեն Դավթյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Հովհաննես Գրիգորյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աննա Օթարյանին, Ղևոնդ Հովհաննիսյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Վարդ Վարդանյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քեթիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N137-Ա որոշման հավելվածում «Պապոյան Գրիգոր», «Պետրոսյան Վարդան», «Սահակյան Թորգոմ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ղազարյան Նարինե», «Դավթյան Արմեն», «Գրիգորյան Հովհաննես» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝